131
4. I. 2.

ՆՈՐ–ԴԱՐ

№ 1 ՏԱՍՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երկուշաբթի 1 Յունուարի 1896 Երկուշաբթի 1 Յունուարի ՏԱՍՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 1

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երիք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում մխիթարեան խմբագրատանը:

Խմբագրութիւնի հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների գառին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ:

ՆՈՐ–ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրականական ամենօրեայ թերթը **1896**-ին կը հրատարակուի Թիֆլիսում նոյն դիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից:

Տարուայ ընթացքում «Նոր-Դար»-ը լոյս կը տեսնի առնուազն 220—225 համար:

«Նոր-Դար»-ը ստանում է սեպհական հեռագրներ և ունի նշանաւոր կեդրոններում յատուկ թղթակիցներ:

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի: Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կոպ.:

ԵՒՐՈՊԱՅԻ և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 դոլլար:

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից սկսեալ:

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում մխիթարեան «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը:

Խմբագրատունը գտնւում է Պուշկինսկայա փողոցում, Սկուերի դիմաց:

Օտար քաղաքներից բաժանորդ գրուողները դիմում են խմբագրութեանը այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ (Caucase, rédaction du journal «Nor-Dar.

ՆԱՆՈՒՅՈՒՄՆ. Առաջիկայ տարուայ համար չ–ել եւ փոչ «Նոր-Դար»-ի համար նոր փոխէ իւր էջերը պատճէնէով:

Եթէ բաժանորդների թիւը սովորականից աւելանայ, «Նոր-Դար»-ը լոյս կը տեսնի չաբաթը երկու անգամ, յամենայն դէպս բոլոր հայ թերթերից «Նոր-Դար»-ը աւելի համարներ կրատայ իւր բաժանորդներին:

Խմբագրութիւնս իւր ջանքը չի խնայիլ թերթի բովանդակութիւնը ճոխացնելու ընտիր նիւթերով և հետաքրքրելի դարձնելու կարևոր տեղեկութիւններով.

Խմբագրութիւնս կունենայ ի միջի այլոց և եւրոպական նշանաւոր կեդրոններից յատուկ թղթակցութիւններ:

«Նոր-Դար»-ի բաժանորդագրութիւնը շարունակւում է: Այն բաժանորդներին, որոնց վրայ ապառիկներ են մնում, առաջիկայ 1896-ին «Նոր-Դար» չի ուղարկուիլ:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Զանազանագործակալութիւններ, առանց մ'ևր յանձնարարութեան եւ գիտութեան, «Նոր-Դար»-ի բաժանորդագրութիւն են ընդունում

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ՄԵՐԻՑ

(Կալանդի գրոյց).

I.

Կ. Պոլսի հեռաւոր թաղերից մէկում, ուղիղ ծովափին գտնւում էր մի փայտաչէն հասարակ տուն: Այդ տունը երբէք ուրախ կեանք չէր տեսել. մէկը միւսին յաջորդող վարձուորները միշտ եղել էին աղքատ ու դժբաղդ: Դրա համար էլ «անիծեալ» անունն էր կրում: Այդ տան վերջին բնակիչները նոյնպէս աղքատ էին: «Անիծեալ» անունը խըրտնեցնում էր բոլոր թաղեցիներին. անհաւատութիւնը դնալով այնպէս ժիրաթափել էր նրանց, որ վերջերում այդ տան մօտով անցնելն էլ անխոհեմութիւն էին համարում, իսկ նրա բնակիչների հետ դրացիական յարաբերութիւն ունենալ—ոչ ոք չէր կամենում. Ոչ ոք չէր հետաքրքրւում թէ ովքեր էին բնակւում այնտեղ, ինչ էին ուտում, ինչպէս ապրում... Շատ մօտիկ դրացիները միայն դիպուածով տեսել էին նրանց երեսը և այնքան գիտէին՝ դարձեալ դիպուածով՝ որ անիծեալ տան վերջին բնակիչները էին մի պառաւ կին և մի չափահաս աղջիկ. Ո՛վ էր այդ կինը, ով էր այդ աղջիկը, որտեղից էին բուսել—հարցնող չկար, այլ դիպուածով,—այո, միշտ դիպուածով,—տեսնում էին, որ այդ տան ցնծելոյզից երբէք ծուխ չէր բարձրանում, ասել է օճախը միշտ մարած էր և' ղրանց օրով: Հետաքրքիր կանայք, այն էլ դաղթադուլի, այսքանս կարողանում էին հաղորդել միմեանց, որ տնից տան վերջին բնակիչները օտարականներ էին՝ որ ըստ երևոյթին՝ շատ պարկեչտ էին, իսկ նրանց դուռը՝ ոչ զիչերով և ոչ ցերեկով ոչ մի մարդ բաղնած չէր բացի մի ծերուկ քահանայից, որ նոյնպէս օտարականի կերպարանք ունէր: Իսկ այդ քահանան շատ յաճախ էր գալիս, միշտ որոշեալ ժամին և արևը մայր մտնելուց յետոյ: Քահանայի եկած իրիկունները միայն անիծեալ տան պատուհաններից ճրագի աղօտ լոյս էր երևում, բայց դարձեալ նոյն գերեզմանական լուութիւնը, նոյն անձայն, անշշուկ կեանքը:

Դրանք կազմում էին թաղի համար մի անծանօթ երևոյթիւն, բայց խորհրդաւոր երևոյթիւն, որոնց առնչուիլ կամ ներս մտնել ոչ ոք համարձակւում էր:

Այն սովորական բաժանորդները, որոնց վրայ ապառիկները մնալու պատճառով թերթի առաքումը դադարեցրել ենք, շատ է նեղանան մեզանից, որովհետև խմբագրութիւնս անկարող է պոստի ծախքը (միւս ծախքերը չենք թւում) հոգալու, մանաւանդ որ պոստային վարչութիւնը „Նոր-Դար“-ի իւրաքանչիւր տրնակի վճարը կանխիկ է ստանում:

„Նոր-Դար“-ի առաջիկայ համարը լոյս կը տեսնի յունուարի 5-ին, ուրբաթ օրը նոր ծոլոտած տառերով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդ.—Նոր տարին, Կռիւ ժամանակի դէմ, Լրագրի չորքը:

Քրոնիկոն.—Նպաստամատոյց յանձնաժողով. Հայ օրացոյցը Թիւրքիայում. Հաղպատի վանահօր սպանութիւնը. Նոր տարու չնորհաւորանք. Գանձանակ աղքատների համար. Երևանի նոր նահանգապետ. Պարոցական արձակուրդները.

Քաղաքական.—Վերջին տեղեկութիւններ Թիւրքիայի գործերի մասին. Անցած տարին Ֆրանսիայի և Անգլիայի համար.

Խառն լուրեր.

Հեռագրներ.

Բանասիրական.— Մաթեցու.

Տեղեկութիւններ.

Յայտարարութիւններ.

Թիֆլիս, 31 դեկ., 1895 թ.

ՆՈՐ ՏԱՐԻՆ

—

Մինչև վերջերս ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գարձած էր

II.

Դեկտեմբեր 31-ին էր, կալանդի իրիկունը: Արևն արդէն մայր էր մտել, բայց, չնայելով ձմեռ լինելուն, օդը աքանչելի էր, կատարեալ գարնանային: Երկինքն էլ կարծես իւր միլիոնաւոր վճիտ ոստղերով մասնակցում էր օրուայ նուիրական ուրախութեանը—այնքան պայծառ, այնքան ժպտուն էր նա. իսկ լուսինը իւր կաթնագոյն փառահեղ դէմքով լողում էր կապոյտ անհունութեան մէջ, արծաթազօծելով ամբողջ քաղաքը: Օդը նոյնքան մեղմ էր ու քաղցր, և երկրային հովը փչում էր չատ զգոյշ կերպով. նրա մեղմ հոսանքի տակ հազիւ թէ սարսռում էր ծովի միապաղաղ հարթ մակերևոյթը:

Քաղաքի բնակիչները, առանց դասակարգի խտրութեան, ուրախ էին: Քրիստոնեայ տներից բարձրանում էր ծուխը, իսկ պատուհանները լուսաւորուած էին ուրախական հանդիսաւորութեամբ: Փողոցներն աւելի ևս բազմամարդ էին դարձել և ամեն ոք ինչ-որ մի բանով բեռնաւորուած չատանում էր իւր տուն:

Մեզ ծանօթ քահանան էլ մի ձեռքում իւր անբաժան գաւազանը, իսկ միւսում ինչ-որ կապոց, պանդոյտ, ծերուներին յատուկ քայլերով առաջ էր տարուղ անցքերին, Անգլիան յեռ չէր կանգնի իւր մտադրութիւնից և ստիպուած չէր լինի երես դարձնելու իւր շահերի համար արիւն թափողներից, մինչև իսկ եթէ դրանով Ֆրանսիային գրգռած լինէր իւր դէմ:

Անգլիան էր չատաճառը, որ մինչև վերջերս աշխարհի ուշադրութիւնն Արևելքի վրայ էր գարձած, նոյն Անգլիայի պատճառով է գարձեալ, որ երէկ աշխարհին անյայտ Վենեցուէլայի և Տրանսվաալի հասարակապետութիւնները յանօր յայտնի են գարձել:

Իսկապէս աշխարհին հետաքրքրքրողը այդ յիշուած երկրները չեն, այլ մեծ տէրութիւնների յարաբերութիւնները, որ անսպասելի փոփոխութիւնների են ենթարկւում:

Երբ անգլիական կառավարութեան ղեկը անցաւ մարքիզ Սոլսբըրիի ձեռքը, ով կըսպասէր, որ Գերմանիան և Անգլիան մի հետ կըթշնամանան և այն էլ այն աստիճանի, որ պատերազմի ձայները լսուեն, ինչպէս որ այժմ խօսւում է:

Լուսնի տակ ոչ մի բան մշտնջենաւոր չէ... ամեն բան փոխւում է:

Գերմանիայի երիտասարդ կայսր Վիլհելմը իւր մեծ մօրը՝ Անգլիայի թագուհուն շատ վշտացրեց Անգլիայի քաղաքականութեան դէմ բռնած ընթացքով:

Այսպէս է աշխարհում, ինչպէս անհատները, այնպէս և ազգերն իրենց բնաւորութեամբ տարբերւում են միմեանցից: Մէկը

—Դուք յոգնում էք ձեր այժերից վեր, տէր-հայր, դուք ձեզ զրկում էք... բայց ինչու է այդ յոգնութիւնը, ինչու այդ ինքնազրկողութիւնը և ում համար...

Քահանային այնպէս թուաց, թէ այդ ձայնը նա լսում է գերեզմանի խորից թէ այդ յուսահատական բառերը արտասանւում են մի արդէն մեռած, թաղուած ու վաղուց փտած դիակի ստկրային շրթունքից: Այդ միտքը սարսռացրեց նրա ամբողջ մարմինը:

—Քեզ համար, զաւակս, պատասխանեց նա:

—Բայց ինչ օգուտ, միթէ միևնոյնը չէ —այսօր մեռնեմ, թէ վաղը...

—Չէ, միևնոյնը չ՝ վաղը կարող են հանգամանքները փոխուել:

—Հանգամանքները փոխուի՞, կըրկնեց օրիորդը հեգնական դառը ժպիտով —միթէ հաւատում էք դրան:

—Աստուծոյ կամքն անքննելի է, զաւակս... ես վաղուց մեռած կըլինէի, եթէ չլինէիր դու, զէպի քեզ ունեցած պարտականութիւնս կեանք է տալիս ինձ հաւատում եմ, որ քեզ պիտի տեսնեմ բոլորովին երջանիկ:

Ու նա երկար, շատ երկար քարոզ լսեցրց, ապացուցանելով, որ դժբաղդութիւնը չէ, որ մարդուն կատարեալ դժբաղդ է դարձնում, այլ դժբաղդու-

Ես իրեն չեմ ասել, որ իրեն չեմ ընդունում, դիտեմ, որ նրան ընդունում է, որ չէ կարող ինքնասպան լինել իր ձեռքով։

Ես կամ նա պիտի մեռնի, ուրիշ ելք չկա։

Ես ուզում եմ, որ նա ապրի, ես ուզում եմ, որ նա ինձ սիրի, ես ուզում եմ, որ նա ինձ ամուսնանա։

Ես ուզում եմ, որ նա ինձ ամուսնանա, որովհետև ես ուզում եմ, որ նա ինձ սիրի։

Ես ուզում եմ, որ նա ինձ սիրի, որովհետև

կոչում է համամարդկ բնաւորութիւն ունեցող այցելութիւնների վրայ, բայց և այնպէս լրագրի այսօրուան համարը կարդացում է մի տարօրինակ հետաքրքրութեամբ։

Այդ ի նկատի ունենալով, ես մտածում էի, թէ այսօր ինչ կարող էի տալ «Նոր-Դար»-ի ընթերցողներին, որ գէթ մասամբ գոհացում տար նրանց հետաքրքրութեանը։

Եւ վճռեցի, որ ամենից հետաքրքիրն, իմ կարծիքով, այն կըլինէր, եթէ ես ծանօթացնէի ընթերցողներին նոյն այն լրագրի ներքին կեանքի հետ, որն այնքան հետաքրքրում է նրան։

Լրագրի ներքին կեանքը. նրա մէջ գործողների, նրա հետ կապ ունեցողների դրութիւնն այնքան ուշի հետաքրքիր նիւթեր են, որ երբէք հրապարակ չեն հանւում։

Սակայն ես խօսելու եմ ընդհանուր առմամբ. ես այս դէպքում օգուտ եմ քաղում ունգարացի լրագրող Պոլցօյի մի գրուածքից, որը թէև բաց է անում խմբագրական ներքին գործերը ծածկող վարագոյրի մի փոչը միայն, բայց ես կաշխատեմ, որքան հնարաւոր է, բաց անել մի փոչից աւելին, բայց ոչ ամբողջ վարագոյրը, որովհետև... այնուամենայնիւ խմբագրական ներքին կեանքը մի տեսակ հոտած ճահիճ ասում, թէ «արբունքիւն արբոց» է, որը անմատչելի է և անմատչելի էլ պիտի մնայ...

Դանք ուղղակի գործին։

Լրագրողը (ժուրնալիստ),— ասում է Պոլցօն,—գործ ունի հասարակական երկու տեսակ կարծիքի հետ։ Հասարակութեան մի մասը լրագրողի վրայ նայում է վերեից ներքև, այսինքն՝ արհամարհանքով, և կարծում է, թէ լրագրողի նպատակն այն է միայն, որ մի կերպ լցնէ թերթը, միևնոյն է—ինչ բանով ուզում է լինի։

Հասարակութեան միւս մասը մեզ, լրագրողներիս վրայ նայում է մի առանձին երկիւղածութեամբ։ տպագրուած խօսքը նա ընդունում է իբրև մի պատգամ, որի վրայ կարելի է երդուել։ Շատերը վախվխելով են մօտենում խմբագրին, լեզուները կապւում է նրա հետ խօսելիս. խմբագիրն ամենակարող անձն է երևում նրանց աչքում։

Նշանաւոր երևոյթ է, որ լրագրի ներքին կեանքը հասարակութեան աչքից ծածկուած է մի անթափանցելի քողով. այս է պատճառը, որ նրա ձայնը գօրաւոր լինելով, չատերը ատում են, չատերն էլ չափազանց բարձր են գնահատում նրան։ Թերևս չեն սխալւում ոչ առաջիններն և ոչ երկրորդները...

Կան երկու տեսակ լրագրողներ. 1) գործի անունով զուտ անձնական չահերի հետամուտ եղողներ և 2) անձնական կեանքը գործին զոհողներ։ Առաջին տեսակի լրագրողը ապանա՝ մի տող չի գրիլ, մինչև որ անձնական չահն ի նկատի չունենայ. այդպիսիները նրան, ում իրենց չահը պահանջում է, որ հայհոյեն, կըհայհոյեն ամենախայտառակ լեզուով, բայց անպատճառ կեղծ անունով, որովհետև վախկոտ են, աւելի քան նպատակը։ Իսկ նրան, ում գործակից իրենց անձնական չահերի տեսակէտից, հարկաւոր է որ ներքողներ կարդան, կըգովաբանեն այնպիսի բառերով, որոնց չտալել կարելի է միայն ատուածներին։ Ներքողների արժանացող այդպիսի բազդաւորները սովորաբար լինում են աշխարհիս զօրաւոր ճանաչուածները, թէև իսկապէս դրանք լինին մի-մի զէրոներ։ Իրենց անձնական չահին հետամուտ եղող լրագրողները իրենց գրած ներքողների տակ արդէն առորագրում են իրենց իսկական ազգանունը, որովհետև նրանք քուռ են, ինչպէս կատու։ Այդպիսի լրագրողները սովորաբար սիրում են միշտ խօսել «իդէալներից», «բարեկամական ձչմարտութիւնից», «բարձր գաղափարներից» նրանք միշտ «ըզգուշում են»... Քղքի վրայ, իսկ կեանքի մէջ նրանք ոչ թէ զգուշի, այլ քամմնելի են մազերից սկսած մինչև ոտների պճեղները։ Փող տուր այդպիսիներին, և նրանք ամենայն պատրաստականութեամբ մինչև անգամ Քրիստոսին նորից խաչ կըբարձրացնեն, և այդ բանը նրանք կանեն այնպիսի սիրուն բառերով, որ դուք, եթէ չէք ճանաչում այդ պարոններին, կըբացականչէք՝ այո, ի խաչ հան զդա, արժանի է...

Իսկ լրագրողների երկրորդ տեսակն արդէն հակառակ պատկերն է ներկայացնում։ Նրանք համեստ են, գործում են աւուր ու փուս, երբէք հրճուան ճիչ-ճպուռներ չեն գործածում, նուիրուած են իրենց գործին՝ առանց մի որևէ ակնկալութեան, գրում են այն, ինչ որ մտածում ու զգում են. կեղծ ոչինչ չէք գտնիլ նրանց գրուածքների մէջ։ Հակառակ առաջիններին, որոնք սիրում են միշտ հրճուան բաներից խօսել, երկրորդները ամենայն սիրով պատրաստ են ամենատորին աշխատանքն յանձն առնելու, միայն թէ դրանով ծառայած լինին իրենց սիրած գործին։ Այս կարգի լրագրողները գրում են առաջիններից աւելի չատ, աշխատում են, տանջւում են գիշեր ցերեկ միմիայն գործի սիրոյն համար և միշտ անյայտութեան մէջ են մնում ու անյայտութեան մէջ էլ մեռնում...

Բազդաւոր է այն լրագիրը, որ ունի երկրորդ տեսակի աւելի չատ աշխատակիցներ...

Լրագրողների այս երկու տեսակի քարակերպիկը ես ուզում եմ իմ անձնական փորձից, որ ունեցել եմ նոյն իսկ հայ լրագրական հողի վրայ...

Այս մասին ես վարագոյրը կիսաբաց եմ թողնում այն պայմանով, սակայն, որ յարմար եղած դէպքում ամբողջ վարագոյրը բանամ։ Իսկ այս անգամ ես ուզում եմ խօսել իմ ընտրած նիւթի մասին առհասարակ, որ և կանեմ յօդուածիս հետևեալ գլուխների մէջ։

Լրագրող։

ՔՐՈՆԻԿՈՆ

«Ռուսաց գործակալութիւնից», կ. Պոլսից մենք ստացանք հետևեալ հեռագիրը։

«Կազմւում է մի յանձնաժողով տուրքանի նախագահութեամբ օգնութիւն հասցնելու համար ասիական վիլայէթներում մտերս կատարուած անցքերից վնասուածներին։ Օգնութիւնը կըհասցնուի Թուրքերին և քրիստոնեաներին»։

—

Մեր Քղքակիցը կ. Պոլսից գրում է մեզ.—Նոր տարուայ առթիւ, հայոց օրացոյցի խնդիրը կրկին հրապարակ է դուրս եկել. գրաքննիչը չնչում է չատ բան, ինչպէս Քաղաւոր, զօրավար, նահատակ և այլ այսպիսի բառեր։ Ինչպէս երևում է, այս տարի առանց օրացոյցի պիտի մնանք։ Պատրիարքարանը փոխանակ օրացոյց տպագրելու, չարքաշական ուսնացոյցը պիտի քարշ տանէ եկեղեցու դռներում։ Բայց կան տպատու և չահամոլ մարդիկ, որոնք մեզնեին ուշադրութիւն չեն դարձնում պատրիարքարանի ապած օրինաւոր կարգադրութեան վրայ. դրանցից մէկն է, ինչպէս լսում ենք, ինչ-որ Գաղատիանոն անուն մի տպագրանատէր, որ մտածում է տպագրել Թուրք կառավարութեան կողմից արբագրուած օրացոյցը։

—

Շուլալերից մեզ գրում են, որ դեկտ. 27-ին գիչերը, անյայտ չարագործներ Հաղպատայ վանքում, իբր սեմնակում պահել են վանահայր Յակովբ վարպետ Նորատունկեանցին։ Մանրամասնութիւնը պակասում է Հաղբատու տանուտէրից դեկտ. 28-ին Շուլալերում ստանալով այդ մասին զեկուցումը, տեղական ոստիկանական վարչութիւնը իսկոյն ուղարկել է Հաղբատ տասնհինգաոր մի խումբ կազակներով քննութիւն կատարելու և եղելութիւնը բաց անելու։

—

Սուրջիկայ մայիսեան թագաւորութեան պատճառով լուսաւորութեան մինիստրը կարգադրել է, որ բոլոր բարձրագոյն, միջնակարգ և տարրին կարգի դպրոցներում մայրաքաղաքներում ուսումը պիտի վերջանայ մայիս 3-ին, իսկ միւս քաղաքներում մայիսի 11-ին։ Բոլոր աշակերտները պիտի վճխաղրուեն տարեկան թուանշաններով բացի աւարտողներից, որոնց պարապմունքներն ընդհատւում են միայն երեք օր։

—

Ինչպէս ամեն ձրագալոյցներին, առաջիկայ Սենդեան ձրագալոյցին ես կարգադրուած է դանձանակի չրջեկներ եկեղեցիներում ազքատների համար։

—

Երէկ, դեկտ. 31-ին, Թիֆլիսում հանդիսաւոր կերպով բացուեցաւ «Նեպլի» ընկերութեան նախաձեռնութեամբ երեխաների համար հիմնուած հիւանդանոցը։

—

«Կարս» լրագիրը հաստատ աղբիւրից հաղորդում է, որ Երևանի նահանգապետի պարապ մնացած պաշտօնի համար արդէն ներկայացուած է Թերեքի չրջանի նահապետ ատամանի օգնական գնդապետ-մայոր Ն. Ա. Շեպելևը։

—

Քաղաքիս բոլոր հայ հոգևորական դասը և ուսուցչական խումբը քահանան տեսչի հետ պիտի ներկայանայ սրբ. առաջնորդին այսօր, ժամը 10 ին, չնորհաւորելու նոր տարին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՑԻ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Ռուսաց. Հեռագ. գործակալութիւնը» դեկ. 24 թուով կ. Պոլսից հեռագրում է հետևեալը. «Թիւրքերից հաղորդում են, որ երկու օր առաջ ամբողջ քաղաքի վրայ տարածուել էր մեծ սարսափ։ Ժողովուրդը ապատատանել էր եկեղեցի։ Զինուորական հրամանատար Աբդիւլ փաչայի եռանդուն գործունէութեան չնորհիւ քիւրդերի չարժումների առաջն առնուել է։

«Դեսպանատների թարգմանները երէկ խորհրդակցութիւն ունեցան արտաքին գործերի մինիստր Թեֆիկ փաչայի հետ, որի նիւթն էր Զէյթունի խռովարարներին հնազանդեցնելու վերաբերմամբ դեսպանների առնելիք միջոցառութեան մանրամասնութիւնները քննել։

«Արտաքին գործերի մինիստրը յայտնեց, որ Բ. Դուռը ընդունում է դեսպանների միջամտութիւնը Զէյթունի արտատմբներին նուաճելու վերաբերմամբ։ Թշնամական գործողութիւնները ժամանակ պատրաստուած են»։

—

Լուրեր են պատում, որ ամերիկան «Marblehead» չոգենաւը գորք է իջեցրել Մերսին նաւահանգիստը, որ չատ հեռու չէ Զէյթուն քաղաքից։

—

Անցեալ ամառ Մակեդոնիայում առաջ եկած ապատամբական չարժումների պատճառաւ զէնքի կոչուած քրիստոնեայ ռեդիֆ գորքը արձակելու հրամանէ գորքերի հրամանատարութեան կողմից։

—

Այս օրերս սուլթանի արքունիքում անյայտ մի անձն ատրճանակ է արձակել Պատերազմական գործերի մինիստրն անմիջապէս կանչուած է պալատ, ուր մինչև երեկոյ մնացել է։ Բոլոր պալատական ծառայողներն և արքունի պաշտօնեաները հարցաքննութեան են ենթարկուած, սակայն և այնպէս մինչև այժմ կարելի չի եղել ոչինչ պարզել։ Սուլթանը ատաւիկ վախեցել է այդ բանից և նրա կասկածոտութիւնն աւելի ևս զգուշացած է։ Հասարակաց աշխատանքների մինիստր Մահմուդ Ջելալեդդին փաչան ենթարկուեցաւ 48 ժամեայ արդելման պալատի մէջ։ Այս արդելումը կապ ունի ատրճանակ արձակուելու հետ։ Պալատի չուրջի հսկողութիւնն աւելի զօրեղի հսկողութիւնն է։

Պալատական թատրոնը, անյայտ պատճառներով, այս օրերս փակուած է և օպերային ու օպերետային երգիչներն ու երգչուհիները արձակուած են մի ամառուայ ռոմբիկները ատանալով։ Պրամատիքական խումբը, որ բաղկացած է թուրքերից, մնում է իր ամբողջ կազմութեամբ։ Արքունի նուագածուների խմբի մէջ գտնուած քրիստոնեաներն ևս մնում են իրենց պաշտօնների մէջ։

—

Սոֆիայից հաղորդում են, որ թուրք լրտեսները ամենայն ակնկլոութեամբ հետևում են մակեդոնական վհուկոմի գործունէութեան։ Վերջինիս ուսումնական կոչուած կոմիտեի ոչ մի անդամ չի մասնակցում, ըստ որում այդ կոմիտեում լուծուած է ուսումնական կառավարութեան ձեռքով։

—

Կ. Պոլսից «Հառաս» գործակալութեան քաչած մի հեռագիր հաղորդում է հետևեալը։

«Ներքին փաչան, Թիւրքիայի բարձրագոյն կոմիտասը կառավարութեան հաղորդել է, որ ամսաթուչակները չատացուելու պատճառով, գինուորները ընդդիմանում են իրենց եղած հրամաններ կատարելուն։ Նրանց մէջ անկարգութիւն է նկատուում, խմբերով դիմում են ապստամբութեան, միացած քիւրդ համիդիէ հեծելազօրի հետ, թալանում են խաղաղ բնակիչների գիւղերը։

«Թուրք կառավարութիւնը իր փաչաների մէջ չի կարողանում մէկը գտնել, որ համաձայնէր Հալէպի ընդհանուր կառավարչի պաշտօնը ստանձնել։ Այդ պաշտօնը առաջարկուել է վեց մարդու, որոնց թուում նաև Քեամիլ փաչային, սակայն ամենքի կարմից էլ մերժողական պատասխան է ստացուել։ Այդ բոլորից յետոյ, առաջարկուել է Ռաիֆ փաչային, որը նոյնպէս հրաժարուել է։

«Ենթադրում են, որ Քեամիլ փաչան ընդունել ազանայի կառավարչական պաշտօնը»։

ԱՆՑԱԾ ՏԱՐԻՆ ՖՐԱՆՍԻԱՑԻ ԵՒ ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՄԱՐ

—

Ֆրանսիական «Rappel» լրագրի մէջ Կամիլլ Ֆլամարիոնը հետևեալ կերպով է խօսում անցած տարուայ մասին.

«Ահա դարձեալ մի տարի անհետ կորաւ անցեալի խորքում։ Այդ տարին Ֆրանսիայի համար չատ էլ ուրախալի չէր. նա ծնունդ ականդալների մէջ, ականդալներով էլ մեռնում է։ Յեխից դուրս եկաւ, ցեխի մէջ էլ չքացաւ»։

Գուստաւ Լեռանէն «Petite Bépublipue»-ի մէջ ասում է, որ անցեալ տարուայ ֆրանսիական ականդալները իր դրչմն են դրել և նոր տարուայ վրայ. Ֆրանսիական Թերթերն առհասարակ վերին աստիճանի անհամակիր կերպով են վերաբերւում անցած տարուան և մեծ մասամբ նախապատչակում են, որ նոր տարին էլ անցած տարուց չատ չի լինելու։

Անգլիական մամուլը նոյնպէս պատճառներ չի գտնում բարի խօսք ասելու անցած Քառասնեայ համար։

«Times»-ը նոր տարուան մօտ տասը սրտնեակ խորհրդածութիւններ է նախ. բեր. մանաւանդ մանրամասն կերպով խօսում է չին հապոնական պատերազմի մասին։ Այդ տեսքիս Լանդոն Սիտիի օրգանը ասում է. «Չին-հապոնական պատերազմի դիպուածը և աներկբայելի հետևանքը հանդիսանում է այն, որ Ռուսիայի ազդեցութիւնը Չինաստանում նչանաւոր չափով զօրեղացել է»։

«Daily News»-ը մի տեսութիւն անելով անցած տարուայ անցքերին, յանդիմանութեամբ կանդ է առնում լորդ Սոլսբըրիի քաղաքականութեան վրայ։ Հետաքրքիրն տալով կաբինետի վարմունքին անգլո-վենետսկական միջնադդի վերաբերմամբ, «Daily News»-ը միևնոյն ժամանակ վերին աստիճանի անաչող է հայմարում Սոլսբըրիի մինիստրութեան փորձերը հայկական խնդրում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկան Պարսկաստանում կամ Մոզիքուլ-լրագիրը.— Մարդու տպաւ տղիկ ուեննցողների ուչադրութիւնն ենք հրաւիրում Թեհրանի «Նաւիդ» թերթում հրատարակուած հետևեալ յայտարարութեան վրայ.

«30 տարեկան մի տղամարդ Թեհրանում, քրիստոնեայ, լաւ գիրք ունեցող (տարեկան 3000 թուման առնիկ ունի) փնտռում է հետը պտկուելու համար, մի քրիստոնեայ տղիկ, որ լինի 15 տարեկանից ոչ աւելի. լինի բարուական չքաւոր, բայց լաւ ընտանիքից և որ ուեննայ հետևեալ յատկութիւնները։

Իմանայ լաւ տասն (նաբիեն),
Լինի գեղեցիկ և համեստ,
Երկար մազերով, սիրուն, փոքրիկ ատամներով և ատլակ վերջից չուեննայ երեսի վրայ։

Եթէ կարող է Քող յատանկարը ուղարկի, ապահով լինելով որ գալուն կըպատուի։

Դիմել փակ նամակով հետևեալ հասցեով Lit. H. 1895

«Նաւիդ» խմբագրութիւն։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ
ԵՒՈՒԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ» ՀԵՏԱԳՐԻՐՆԵՐ

—

ՀՌՈՄ, 29 դեկտեմբերի 1895 թ.— Դեկտեմբերի 26-ին չօանցիները յարձակում գործեցին Մակալէ նաւահանգստի վրայ, բայց յարձակումը չհաջողեցաւ։

ԹԵՀՐԱՆ.—Դեկտ. 21 ին և 24-ին գօրեղ երկրաչարժ եղաւ։ Ոչնչացան չատ մարդիկ, տասւոր աչխարներ. Խալխալի չրջականերում ոչնչացան 300 հոգի, Խոյ քաղաքում—800 հոգի։

ԼՈՆԴՈՆ.—Կապի գաղութի նահանգապետն առաջարկուած է Քազուհու հրամանով հաստատակատարութեան նախագահ Կրիւգերին ուղարկել հետևեալ հետագիրը. «Ցանձնարարութիւն ունեմ հաղորդելու, որ նորին մեծութիւն Քազուհին հաճութեամբ իմացաւ, որ դուք վճռել էք գերիներին յանձնել Քազուհու կառավարութեան։ Այդ վարմունքը պատիւ է բերում ձեզ և կընպաստէ խաղաղութեան պահպանմանը հարաւային Աֆրիկայում, ինչպէս և համաձայնութիւնը անգլիական և հոլլանդական ցեղերի միջև, որ այնքան անհրաժեչտ է նրա ապագայ զարգացման ու բարգաւաճման համար»։

«Ռէյտ. գործ.»-ը հերքում է «World» լրագրի հաղորդած լուրը, որ վենեցուէլան իբր թէ յեղափոխական գրութեան մէջ է գտնուում։

ՎԼԱԴԻՎԱՍՏՈԿ, 30 դեկտեմբերի. («Նովի. Վր.»).—Անգլիան ձգտում է մօտենալ Ճապոնիային, և երկուսն էլ գալիս անգլո-ճապոնական միութեան եռանդուն կողմնակիցներ։

Սէուլից հաղորդում են, որ դժգոհութիւնը Կորէայում աճում է։ Պատրաստուում են դահընկէց անելու թագաւորին այն նպատակով, որ գահ բարձրացնեն Թայվանկունի սիրած Քոուանը։ Ճապոնական զօրքի թուի նուազացումը Կորէայում վերջանալու վրայ է։ Ինդիր է յարուցուած Կորէան միացնել ութուքիւնների հովանաւորութեան տակ դնելու։

ԼՈՆԴՈՆ (Նով. Վր.)։—Այսաեղ ամենքը համոզուած են, որ Անգլիայի և Տրանսվաալի միջև խաղաղասիրական համաձայնութիւն է կայացել։ Ցայս ուղին, որ նոյնպէս համաձայնութիւն կըկայանայ և Վենեցուէլայի հետ, որով կըվերանայ Միացեալ Նահանգների հետ այլևս ընդհարուելու առիթը։ Անգլիական ժողովրդի բոլոր խաւերում խիստ զայրոյթ է նկատուում Գերմանիայի դէմ, Միխինգների մէջ որոշումներ են ընդունուած Բերլինից անգլիական դեսպանին յետ կոչելու և անգլիական նաւատորմի ցուցակից ջնջելու մասին պատուաւոր ծովակալ Վիլհելմ կայսր անունը։ Քաղաքական ականաւոր գործիչները յանկարծ սկսել են խօսել այն մասին, թէ անհրաժեշտ է բարեկամական համաձայնութիւն կայացնել Ֆրանսիայի և Ռուսիայի հետ։

ԼՈՆԴՈՆ («Նովոստի»). — Պորտուգալիան մերժել է գերմանական կառավարութեան խնդիրքը այն մասին, որ Թոյլ տայ զօրքերին ափ իջեցնելու իւր հողի վրայ Պրետորիա գնալու համար։

Նախագահ Կրիւգերը պահանջում է վերացնել 1884 թուի դաշնագիրը.

Chartered Company-ին հրաժարուում է վճարելու պատերազմական ծախքերը, պնդելով, որ Ջեմսոնը նախ քան իւր պատերազմի գնալը Թողել է իւր պաշտօնը, որ ունէր Company-ի մէջ։

ԼՈՆԴՈՆ.— Իոհաննէսբուրգից «Times»-ին հաղորդում են. «Հաւաքուած են 1,500 հոգի, որպէսզի, ի պահանջել հարկին կռուի դուրս գան օտարերկրացիների դէմ։ Դէպի վերջիններս Թըշնամաբար է վերաբերուում գերմանական մի ուժեղ կուսակցութիւն։ Բնակիչներն սկսում են բաց անել խանութները։ Խաղաղութիւնը վերականգնած է։ Կարօտեալներին օգնելու համար Տրանսվաալի կառավարութիւնը յատկացրել է 15,000 ֆունտ ստերլինգ»։

Բլոմֆոնտէնից հաղորդում են, որ Իոհաննէսբուրգի մօտ կեդրոնացած է 20,000 բոյէր։

«Times»-ին Մելբուրնից հաղորդում են. «Այսաեղ Գերմանիայի դէմ խիստ թշնամական տրամադրութիւն է տիրում։ Թատրոնում նուագուած գերմանական հիմնը չուացրին։ Նուագածուների խումբը ստիպուած էր յաճախ նուագել «Bule Britanina»։

ԼՈՆԴՈՆ. —Թագուհու հրամանով Ջեմբերլէնի ուղարկած հեռագրին նախագահ Կրիւգերը պատասխանեց. «Լուրջ մտադրութիւն կայ Ջեմսոնին և միւս գերիներին յանձնելու անգլիական իշխանութեան ձեռքը այն պայմանով, որ նրանց պատժի ենթարկէ բրիտանական կառավարութիւնը։ Այս գործի մասին վերջնական վճիռ կըկայացուի, հենց որ կարգը վերականգնէ Իոհաննէսբուրգում»։

ՆԻՒ-ԵՕՐԿ.—«World»-ին հաղորդում են կարակասից, որ չատ զինուած մարդիկ գաղտնի կերպով գնում են դէպի Վենեցուէլայի սահմանները։ Առանձին այժ ունի չարժումը արևելեան գաւառներում։

ՊՐԵՏՈՐԻԱ.—Կառավարութիւնը դատապարտում է, որ բնակիչները սիրով չեն յանձնում զէնքերը. 30,000 հոգուց, որոնք զէնք ունին, 2,000-ն է միայն հրամանը կատարել։ Կառավարութիւնը պահանջից, որ զէնքը յանձնուի մինչև մօտակայ իրիկուն։ Նրանց, ով կըհպատակէ այդ պահանջին, ներում է խոստացուած, բայց ապստամբների պարտիզանների հետ կըվարուեն առանց զիջումի։

ԼՈՐԵՆՑՈ-ՄԱՐԿԵՑ.—Այսաեղ հաստատուած գերմանական մարտանաւը։

ՇԱՆՏՀԱՅ (Նով. Վր.)։—Սէուլից հաղորդում են, թէ ճապոնացիները ստիպել են Քորէայի Թագաւորին, որ պալատից հեռանայ։ Երկու քորէացիներ մահուան պատժի են ենթարկուած Թագաւոր ապաստանը մատակարարելուն համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 դեկտեմբերի։—Թագաւոր Կայսրը, Մարիա Ֆէօդորովնա և Ալէքսանդրա Ֆէօդորովնա Թագուհի Կայսրուհիները, Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի, Օլգա Նիկոլաևնա և Օլգա Ալէքսանդրովնա Մեծ Իշխանուհիների հետ այսօր տեղափոխուեցին Պետերբուրգ այստեղ ապրելու։

ԻՕԱՆՆԷՍԲՈՒՐԳ.—Ձերբակալուած են ռեֆորմների մասնաժողովի 22 անդամներ, դրանց Թուում Սեսիլ Ռոդսի եղբայրը, գնդապետ Ռոդսը։ Նրանց մեղադրում են պետական դաւաճանութեան համար։ Ձերբակալուածներն ուղարկուած են Պրետորիա։ Իոհաննէսբուրգի խաղաղութիւնը խանգարուած չէ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Դեկտեմբերի 29-ից.

Գնքաէլի կուրս 3 ամսով

Լոնդոնի վրայ 10 ֆ. ստ.	93,80
Բերլինի վրայ 100 մարկ	45,675
Փարիզի վրայ 100 ֆր.	37,10
Գնքաէլի կուրսի տրամադր. համար էն նոր կարած պոլտիմպերիալներ	7,50—7,50
Մաքսային կուպ. (100 ր. մետալով)	149.— 150
Բորսային զեղչը	6¹/₂—7¹/₂-ից %
4% Վետակ. արժէթղթ.	97¹/₂ ասկ.
5% ասկ. արժէթղթ. 1884 թ.	159 գն.
% Առաջ. Ներքին փոխ.	
խաղաստմա 1864 թ.	281 ասկ.
5% Երկր. Ներքին փոխառ.	
խաղաստմա 1866 թ.	241¹/₂
Ազնուակ. հող. բանկի	
գրատակ. խաղաստմա	209¹/₂
5% Վետակ. երկաթուղ. արժէթուղթ	100
4% Ներքին փոխ. I սեր.	97¹/₂
» » » II »	97¹/₂
» » » III »	97¹/₂
» » » IV »	97¹/₂
4¹/₂% փոխ. 1893 Թուի	100
» փոխ. 1 հրատակ.	100
» փոխ. 2 հրատարակ.	100
4¹/₂% Գրատակ. արժէթղ. ազն. հողային բանկի	100
4¹/₂% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր	99¹/₂
5% Ս. Վետ. քաղ. վ. ընկ.	103¹/₂
» » Մոսկուայի	103¹/₂
5¹/₂% Գրեասյի	99¹/₂
5% Բիլթի	98 գն.
5¹/₂ Գրատակ. արժէթ. հող. բանկերի Խարկովի	100¹/₂
» Գալտասյի	99¹/₂
» Տուլայի	100¹/₂
» Պէնզայի	100¹/₂
» Մոսկուայի	100¹/₂
» Պէնզայի	99¹/₂
» Ռիազանի	99¹/₂
» Վիլենկի	99¹/₂
6% Թիֆլիսի կալ. բանկի	101 բ. վաճ.
5% » » »	98 գն.
% Հարթայիսի կալ.բանկ.	101 բ. վաճ.
5%% » » »	98 գն.

Խմբագիր հրատարակիչ՝
ՍԳԱՆԴԱՐ ՍԳԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Բարձր դասակարգի կանայք, ինչպէս և գեղեցկուհեամբ առհասարակ հռչակաւոր հիւանդասենեակը դեղատանուհիներէ հրաժարուելին գործածել ԿՈՑԼԴ-ԿՐԵՄ (Cold-Cream), որ դառնահամ է իւղալի տեսք է տալիս դէմքին։ Դրա տեղ նրանք գործ են ածում CREME-SIMON (Կրեմ-Սիմոն) դեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չէ փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի չնորհալիութիւնն ու և բիտասարդական թարմութիւնը։

LA POUDRE SIMON (Պուդր Սիմոն) LE SAVON ALA CREME SIMON (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները։

I. SIMON., 13 rue Grande Bateliére, PARIS Մաս-մաս վաճառում է վարսավիրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ։

(M.) 12—11

Գ. Ֆ. ԼՈԿԿԷԻ
ՏԱԿԱՌԱՊՈՐՇԱՐԱՆԸ.
առաջարկում է ամենանոր ձևի
ԳԻՆԻ ԵՒ ՀԱՐՑՆՈՂ ԱՆՕԹՆԵՐ
Փակ դրութեամբ հեռացնող տակառներ, անօթներ և առհասարակ ամեն տեսակ ամաններ գէշ- և գրչջոյթ համար։ Նմանապէս սեպհական ձեռակերտ, զանազան նկարների
ՊԱՐԿԵՏՆԵՐ
չոր, հղտած կաղնի փայտից։ Պրէյսկուրանտները ուղարկուում են ձրի։ Հասցէն նամակների և հեռագրների համար՝
Казань, Локке,
(M.) 24—2

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՊԱՏՄԱՀԱԿԱՆ ԻՐԵՐ
Կահկարասիք, դաշնամուր, լիակատար սպրդուկարգ և այլ ամեն ինչ, А. Генке и К°, Москва, поссажъ Солодникова, съ Неглинnаго, С. М.
(M.) 2—2



Фабрика піанино А. КОППЪ
(Михайловская, № 132-й).
Продаются піанино изъ лучшихъ мѣстныхъ и заграничныхъ матеріаловъ на металлическихъ доскахъ съ перекрестными рунами. Отпускъ піанино на прокатъ. Пріемъ инструментовъ въ починку.
(367) 50—31

ՊԱՀԱՆՋԵՑԼԻՔ ՄԻԱՑՅԱԼ
ՍԱՊՈՆ „ՎԱՋԵԼԻՆ“ լաւ, չժան, գործնական և օգտակար
«ՀԻԳԻԵՆԱ» ԸՆԿԵՐՈՒԹԻԱՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ։
Գլխաւոր պահեստները.—С.-ПЕТЕРБУРГЪ, Александр. площ. 9. МОСКВА, ВАРШАВА
(M.) 9—5

ՕԺԻՏՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ
ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ Է 22,500,000 րուբլի։
Ընկերութեան տոկոսաբեր Թղթերը պահում են պետակ. բանկում։
Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, «Ռոսիա» ընկերութիւնը առաջարկում է օժիտի (բաժինքի) ապահովագրութիւնը.
Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 րուբլի օժիտ, այնպէս որ, 18 տարեկան ժամանակին ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «Ռոսիա» ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 րուբլի, (ուրեմն ամբողջ տարուայ ընթացքում 208 րուբլի.)
Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձուին բոլոր իւր վճարած տուրքերը (պրեմիաները,) եթէ միայն ապահովագրուած երեխան վախճանուի պայմանաւորեալ ժամանակից առաջ։
Առ 1-ն յունուարի 1893 թ. «Ռոսիա» ընկերութիւնը 10.811 աղջկանց համար ապահովագրած ունի բաժինք 24.665.300 րուբլու գումարի։
Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կըստացուի իբրև Թոշակ (պէնսիա) կրթութիւնը չարունակելու համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը։
Ապահովագրութեան մասին յարաբերութիւնները ընդունուում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդում են վարչութիւնը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեպհական տուն, № 37), Կովկասեան չրջանի համար՝ ընկերութեան վարչութեան մէջ՝
ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիևսկայա փ., տ. № 6. երկրորդ յարկում և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։
(334) 50—48.

ЕЖЕДНЕВНАЯ
БОЛЬШАЯ ЛИТЕРАТУРНАЯ ПОЛИТИЧЕСКАЯ И КОММЕРЧЕСКАЯ ГАЗЕТА
„ОДЕССКІЙ ЛИСТОКЪ“
ОТКРЫТА ПОДПИСКА
НА 1896 ГОДЪ.

Нашъ девизъ: служеніе интересамъ всей Россіи, безъ различія національностей и вѣроисповѣданій.

Во время предстоящихъ въ наступающемъ году торжествъ СВЯЩЕННАГО КОРОНОВАНІЯ ИХЪ ИМПЕРАТОРСКИХЪ ВЕЛИЧЕСТВЪ, въ «Одесскомъ Листкѣ» будутъ ежедневно помѣщаемы телеграммы и сообщенія изъ Москвы, относящіяся къ этому знаменательному событію.

Въ будущемъ-же году въ Нижнемъ Новогородѣ открывается Всероссійская выставка, подробнѣйшія свѣдѣнія о которой въ телеграммахъ и сообщеніяхъ будутъ ежедневно воспроизводимы въ нашей газетѣ.

На 1896 годъ въ портфелѣ редакціи уже имѣются слѣдующіе разсказы извѣстнаго журналиста, пишущаго подъ псевдонимомъ «ДЯДИ ВЛАСА»: 1) «Старая гвардія», 2) «Умирающая газета», 3) «Легенда о происхожденіи одесситки», 4) «Куміръ», 5) «Знаменитости», 6) «Передовая статья», 7) «Мужъ царицы (изъ закулисныхъ типовъ)», 8) «Мужья», 6) «Проданный выстрѣлъ», 10) «Гладіаторъ», а также разсказы и повѣсти многихъ др. авторовъ.

Кромѣ литературнаго и публициситическаго матеріала, въ газетѣ ежедневно печатаются коммерческія свѣдѣнія—какъ-то: цѣны на хлѣбъ, колоніальные товары, на скотъ, курсы на денежныя бумаги и на монету на русскихъ и заграничныхъ рынкахъ, и все прочее, что можетъ интересовать коммерсанта. Во всѣхъ городахъ и мѣстечкахъ Юга редакція имѣетъ постоянныхъ корреспондентовъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА ГАЗЕТЫ СЪ ПРАВОМЪ БЕЗПЛАТНАГО ЧТЕНІЯ всѣмъ русскихъ, иностранныхъ газетъ, получаемыхъ въ кабинетѣ для чтенія
ВЪ ГОРОДѢ съ доставкою на домъ: 10 руб. на годъ, 6 руб. полгода, 3 руб. 50 коп. три мѣсяца. 1 руб. 20 коп въ мѣсяцъ.
НА ГОРОДА съ ежедневною высылкою по почтѣ: 12 руб. въ годъ, 7 руб. полгода, 3 руб. 80 коп. три мѣсяца. 1 руб. 30 коп. въ мѣсяцъ.

Контора редакціи „Одесскаго Листка“
ВЪ ОДЕССѢ, въ домѣ редактора-издателя «Одесскаго Листка» В. В. Навроцкаго, рядомъ съ Городскимъ театромъ.
3—3 **Редакторъ-Издатель В. В. НАВРОЦКІЙ.**

Հնարաւորութիւն չունենալով առանձին նամակով դիմելու իւրաքանչիւրին, սրանով խնդրում եմ այն յարգելի անձերին, որոնք ինձնից ստացել են «ՄՈՒԱՅՅՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ» գրքերից կոմիսիայով և կամ առանց կոմիսիայի վաճառելու, որքան կարելի է աշխատեն շուտ վաճառել և գներն ուղարկել, որով նպաստած կլինեն «ՄՈՒԱՅՅՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ»-ի Գ. և Դ. գրքերի շուտ լոյս տեսնելուն. արդէն պատրաստ են մամուլին յանձնուելու։

Սարկ. Ե. ՇՈՒՂՈՒՐԵԱՆ

Тифлисъ Дозв. Цензурою 31-го Декабря 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца Воронц. Набережн. Церковный домъ